



ՇԱՐԺԱՌԻԹ *Հայաստան և Ադրբեջան*

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՃ ԿՈՎԿԱՍՍՈՒՄ

Կարգավիճակ՝ 04.06.2021, Ժամը 15:16

Պատերազմի ավարտից ավելի քան կես տարի անց Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը նորից բոցավառվում է: Այս անգամ խոսքը երկու երկրների միջև սահմանի մասին է: Ռուսաստանը վերապահ դիրք է բռնել:

Սիլվիա Շոյոբեր, tagesschau.de

Գրեթե յոթ ամիս է անցել այն օրից, երբ 44-օրյա պատերազմից հետո Հայաստանն ու Ադրբեջանը կնքեցին հրադադար՝ Ռուսաստանի միջնորդությամբ, որը Լեռնային Ղարաբաղի հակամարտության տարածքում տեղակայել է ավելի քան 2000 զինվոր:



Սիլվիա Շոյոբեր

tagesschau.de

@tavisupleba

Բայց այժմ նոր վտանգավոր ընդհարում է տեղի ունենում հայ և ադրբեջանցի զինվորների միջև, ամենից առաջ՝ երկու պետությունների սահմանների հարավային տարածքում: Երևանի կառավարությունը միջազգային հանրությանն ահազանգեց, որ մայիսի 12-ին ադրբեջանցի զինվորները 3,5 կիլոմետր մտել են իրենց իսկ տարածք, մայիսի 25-ին զինվեր է գնդակահարվել

հայկական խոր տարածքում: Այնուհետև, հաղորդվում է, որ մայիսի վերջին Ադրբեջանի անվտանգության ուժերը գերել են վեց, իսկ մի քանի օր անց՝ ևս 40 հայ զինվորների:



Ըստ անվտանգության փորձագետ Ռիչարդ Կիրակոսյանի՝ Երևանում ներկայացրած տեղեկությունների՝ ադրբեջանցի զինվորների խմբերը համակարգված թափանցում էին Հայաստանի հարավային Սյունիքի և Գեղարքունիքի մարզեր: Մի քանիսը տեղավորվում էին, մյուսները՝ կրկին հետ քաշվում: Բաքվի Պաշտպանության նախարարությունը, ընդհակառակը, հայտարարեց, որ սուկ սահմանների ամրացման աշխատանքներ են իրականացվում, որ հայ զինվորականները գերեվարվել են Ադրբեջանի տարածքում: Նշվեց նաև, որ վեց զինվորներ ականներ էին տեղափոխում:



11.10.2020 թ.

Պատերազմ Լեռնային Ղարաբաղի շուրջ

Պատմական օր Հարավային Կովկասում
Հայաստանի և Ադրբեջանի միջև համաձայնագիրը կարող է հեռահար հետևանքներ ունենալ:

Վիճարկելի սահմանագիծ

Սոցիալական լրատվամիջոցներում տեղադրված տեսանյութերը ցույց են տալիս հայ և ադրբեջանցի զինվորների խմբերին, որոնք փորձում են միմյանց քշել և, դրա հետ մեկտեղ, վիրավորում են իրար և ձեռքերին ազատություն տալիս: Տարածքը լեռնային է և սակավ բնակեցված: Հազիվ թե սահմանի գծանշումներ լինեն:

Պատերազմից ի վեր երկու կողմերը խրամատներ են կառուցում տարածաշրջանում: Մինչ այդ՝ Հայաստանը վերահսկում էր սահմանի երկու կողմերի տարածքները: Դրանք մի ժամանակ անվանական հաստատվել էին խորհրդային հանրապետությունների միջև: [Ինչպես նախկին Խորհրդային միության այլ տարածքներում](#), այստեղ նույնպես մի քանի համաձայնություններ կային: Սահմանագծերը հատում են փողոցները, բնակելի տարածքները, ջրերի և դաշտերի պրունկները: Հին քարտեզները մասամբ հակասական են և անճիշտ:

Սոցիալական լրատվամիջոցներում օգտատերերը մատնանշում են Google-ի քարտեզները՝ իրենց կողմի տեղեկությունները հաստատելու համար: Բայց այնտեղ ծառայությունն անճիշտ է այնպես, ինչպես Yandex-ը կամ Open Streets Maps-ը, որոնք ցույց են տալիս տարածաշրջանում տարբեր գծեր: Մրան ավելանում է այն, որ, ըստ ԱՄՆ-ի ՋԼՄ-ների հետազոտության, Google-ը խուսափում է քաղաքական բախումներից՝ ցույց տալով սահմանները՝ կախված դիտորդների IP հասցեից, և դրանով նպաստում է վեճերի:

[Հայաստանով միջանցք Ադրբեջանի համար](#)

Մայիսի կեսերին, սակայն, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կառավարությունները, ըստ երևույթին, բավականաչափ հստակ ապացույցներ ներկայացրին՝ նպատակ ունենալով Ադրբեջանին կոչ անել հետ քաշելու իր զինվորներին: Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հստակորեն և վաղաժամ կանգնեց Հայաստանի կողքին:



Ապրիլին Ադրբեջանի նախագահ Ալիևը սպառնում էր Հայաստանին: Այստեղ՝ Բաքվի «Ռազմական ավարի այգում», որտեղ հայերը խայտառակ կերպով ցուցադրվում են որպես տիկնիկներ: Լուսանկար՝ AFP

Մինչև բախումների սկսվելը՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը սպառնացել էր Հայաստանին. նույնիսկ նրա կամքին հակառակ՝ ինքն իրականացնելու է Հայաստանի

հարավային տարածքով մինչև Նախիջևանի էքսկլավ տարանցիկ միջանցքի ստեղծումը: Երթևեկության այդ հին ուղիները վերակառուցելու միջոցով Ադրբեջանն ուղիղ կապ է ստանում Թուրքիայի հետ, որը սահմանակից է Նախիջևանին, և որը, որպես մերձավոր դաշնակից, պատերազմում ռազմական օժանդակություն ցուցաբերեց:

Պատերազմում կրած պարտության դիմաց Հայաստանը ստիպված էր համաձայնվել այս տարանցիկ միջանցքին՝ որպես ենթակառուցվածքների ավելի մեծ ծրագրի մաս: Դա հրադադարի մասին համաձայնագրի մի կետ է, որը միջնորդել էր Ռուսաստանը:



11.12.2020 թ.

Պատերազմ Լեռնային Ղարաբաղի շուրջ

Երբ ստեղծությունը վերածվում է հանցագործության

Ատելության քարոզչության և դավադրության տեսություններ. դրան հաջորդեցին ամենամեծ դաժանության պատերազմական հանցագործությունները:

Ռուսաստանը վերապահ դիրք է բռնել

Թեև Ռուսաստանը, որպես Հայաստանի պաշտպան տերություն, վերահսկողության տակ է պահում իրավիճակը Լեռնային Ղարաբաղում՝ հակամարտության տարածքում, և այդպես պաշտպանում է այնտեղ բնակվող հայերին, նաև Ռուսաստանի անվտանգության ուժերը Հայաստանի արևմուտքում գտնվող իրենց 102-րդ ռազմաբազայից զինվորներ տեղափոխեցին վիճելի սահմանամերձ շրջան, բայց մինչև այժմ նրանք թույլ էին տալիս, որ փոխհրաձգություններ տեղի ունենան: Նաև Ռուսաստանի գլխավորած անվտանգության կազմակերպությունը՝ «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն» (ՀԱՊԿ), չակտիվացրեց օգնության իր դրույթները Հայաստանի համար:



11.14.2020 թ.

Պատերազմ Լեռնային Ղարաբաղի շուրջ

Հին շահեր ու նոր զենքեր

Լեռնային Ղարաբաղի պատերազմը ցույց է տալիս՝ ուժային քաղաքականությունն ապակայունացնում է տարածաշրջաններ, անօդաչու սարքերը որոշում են պատերազմներ:

ՀԱՊԿ-ում ջանքերից հետո ՀՀ գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանն առաջարկեց երկու կողմերի զինված ուժերի ետքաշում, ինչպես նաև միջազգային դիտորդների տեղակայում՝ Ռուսաստանից, Ֆրանսիայից կամ ԱՄՆ-ից: Բոլոր երեքն էլ պատրաստակամություն հայտնեցին միջնորդել Հայաստանի և Ադրբեջանի միջև [պետական սահմանի դեմարկացիայի](#) դժվարին խնդրում:

Երեք պետություններն առաջնորդում են հակամարտության կարգավորման համար 1990-ականն թթ. սկզբից գոյություն ունեցող ԵԱՀԿ Մինսկի խումբը: Այնուամենայնիվ, Ադրբեջանը Ֆրանսիային և ԱՄՆ-ին համարում է հայամետ: Աշնանը Ռուսաստանը պատերազմի ավարտը բերել էր Թուրքիայի հետ համաձայնությամբ:



Շարժառիթ 04.24.2021 թ.

Ճանաչում որպես ցեղասպանություն

Կարևոր նշան Հայաստանի համար

Օսմանյան կայսրությունում հայերի տեղահանությունն ու սպանություններն սկսվեցին 106 տարի առաջ:

Հայաստանի կառավարությունը փլուզումն առաջ

Եթե միջազգայնորեն Փաշինյանի առաջարկը դրական ընդունվեց, ապա Հայաստանում այն սրեց ճգնաժամը, քանի որ Փաշինյանն արտահայտվեց՝ առանց արտգործնախարարության հետ համաձայնության: Որպես հետևանք՝ դրա ղեկավարը հրաժարական տվեց: Հունիսի 20-ի խորհրդարանական ընտրություններից առաջ նա և իր դաշինքը շարունակ կորցնում են վստահությունը, մինչդեռ ընդդիմությունը ընտրապայքարում աշխատում է պատերազմական հռետորաբանությամբ: Երկրում հիասթափություն ու զայրույթ է տիրում պատերազմում կրած պարտության կապակցությամբ, վրեժխնդրության մտքեր ու վախ՝ հարևաններ Ադրբեջանի ու Թուրքիայի հանդեպ:

Ինչ էլ լինի, Հայաստանն ու Ադրբեջանը, ահա, Ռուսաստանի միջնորդությամբ վերսկսեցին ուղիղ բանակցությունները: Մահմանային շրջանում, սակայն, իրավիճակը կարող է սրվել ցանկացած պահի:



25.02.2021 թ.

Պատերազմի ավարտից երեք ամիս անց

Իշխանական բաց պայքար Հայաստանում

Վարչապետ Փաշինյանի շուրջ իշխանական պայքարի ամիսներից հետո իրավիճակը Հայաստանում ծայրահեղ սրվել է:

Հրապարակվել է <https://www.tagesschau.de/ausland/armenien-aserbajdschan-grenzkonflikt-101.html> կայքում